

ԿԱՐԾԻՔ

ՎԱԼՏԵՐ ՏԻԳՐԱՆԻ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ «ՀԱՅ ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (1950-2020-ԱԿԱՆ ԹԹ.)» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ներկայացված Ժ.02.01.- «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Սույն ատենախոսության նյութը հայ իրականության մեջ լեզվաբանության կարևոր գիտակարգերից մեկի՝ ոճագիտության (ոճաբանություն) ձևավորման ու զարգացման քննությունն է: Թեման ու խնդիրները արդիական են այն առումով, որ հայ ոճագիտական մտքի պատմության ամբողջական քննությունն ասպարեզում դեռ չկա՝ չնայած վերջին շրջանում լեզվաոճագիտական ուսումնասիրությունները հիմնականում իրականացվում են այս ուղղությամբ, և լեզվական ցանկացած իրողություն ներկայացվում ու վերլուծվում է խոսքի մշակույթի տեսանկյունից: Լեզվի զարգացումն ի հայտ է բերում միևնույն լեզվական իրողության իմաստի արտահայտման զուգահեռ, հոմանիշ ձևեր, կիրառությամբ պայմանավորված՝ իմաստային նոր դրսևորումներ, որոնց քննությունը, կիրառական արժեքի բացահայտումը կարևոր է լեզվի տվյալ փուլի կամ լեզվական ամբողջ համակարգի շատ հարցերի պարզաբանման համար:

Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել հայ ոճագիտական մտքի ձևավորման ու զարգացման պատմությունը՝ 1950-ական թվականներից մինչև մեր օրեր, ինչի իրականացման նպատակով էլ Վալտեր Բերբերյանը առաջադրել ու փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել հայոց լեզվի ոճական համակարգի մասին 1950-ական թթ. մինչև մեր օրերը գրված աշխատանքները,
2. քննական հայացքով վերլուծել այդ աշխատանքները,
3. բացահայտել հայ ոճագիտական մտքի ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտությունն իրականացվել է ըստ լեզվի մակարդակների և ըստ ժամանակագրության, կազմված է «Ներածություն»-ից, հինգ գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, գրականության ցանկից ու հավելվածից.

Ներածության մեջ ատենախոսն ամփոփ ներկայացրել է ոճագիտության ձևավորման պատմությունը, այնուհետ խոսել հայ ոճագիտական մտքի սկզբնավորման ու զարգացման մասին՝ առանձնացնելով հայ ոճագիտական մտքի զարգացման երեք շրջափուլ ու բնութագրելով դրանք՝ միաժամանակ հստակեցնելով իր դիրքորոշումը *ոճագիտություն* և *ոճաբանություն* տերմինների հարցում՝ նախապատվությունը տալով առաջինին:

1. *Առաջին գլխի («Հնչյունային ոճագիտական միտքը»)* սկզբում անդրադարձել է հնչյունային ոճագիտական մտքի զարգացմանը, առկա ուսումնասիրություններին ու կարծիքներին, իսկ համապատասխան ենթագլուխներում («Բաղաձայնային, առձայ-

նույթ, նմանաձայնություն» և «Հնչերանգ, դադար, շեշտ, հանգ») մանրամասն քննել է հնչյունների կիրառությամբ պայմանավորված ոճական իրողությունները, համադրել դրանց վերաբերյալ ոճագիտական ուսումնասիրություններում առկա կարծիքները: Ատենախոսը լեզվաոճական յուրաքանչյուր իրողության կապակցությամբ անդրադարձել է հարցի պատմությանը՝ քննելով հայ և օտար լեզվաոճաբանական տեսությունները տվյալ իրակության վերաբերյալ՝ երբեմն զուգահեռներ անցկացնելով, իսկ վերջում արտահայտելով սեփական մոտեցումն ու եզրակացությունը: Որոշ իրողություններ ենթարկել է համեմատական վերլուծության՝ տանելով *հայերեն-անգլերեն*, *հայերեն-ռուսերեն* կամ *հայերեն-ռուսերեն-անգլերեն* զուգադրական համեմատություն (օրինակ՝ *նմանաձայնության, դադարի, հանգի* ուսումնասիրության հետ կապված): Ատենախոսը որպես բաղաձայնույթի հնագույն դրսևորում նշում է Վահագնի ծնունդը պատկերող երկը, սակայն այստեղ բաղաձայնույթին զուգահեռ հատուկ ընդգծված առկա է նաև առձայնույթ:

Հնչերանգի մասին խոսելիս անդրադարձել է զարգացող ուղղություններից մեկին՝ *փորձառական հնչյունաբանությանը*՝ կարևորելով վերջինիս դերը (համապատասխան հղումով) *հնչյունային ոճագիտության* հարցերի քննության գործում, սակայն այն պակաս կարևոր չէ նաև *բարբառագիտական ուսումնասիրություններ* իրականացնելիս, ինչն էլ իր հերթին կնպաստի ոճագիտական շատ իրողությունների բացահայտմանը կամ արժևորմանը:

Ատենախոսության *երկրորդ գլխի* («*Բառային ոճագիտական միտքը*») *համապատասխան ենթազույններում* («*Բառապաշարի ձևախմբաստային խմբերի ոճագիտական վերլուծությունների քննություն*», «*Բառապաշարի շերտերի ոճագիտական վերլուծությունների քննություն*», «*Դարձվածային ոճագիտություն*») քննվել են բառային ոճագիտության հարցերը, որ հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել 1970-80-ական թթ.-ից: Վալտեր Բերբերյանն այստեղ բառային ոճագիտական ուսումնասիրությունների կողքին հիշատակել է նաև բուն բառագիտական ուսումնասիրություններ (էջ 39)՝ որպես հաջողված բառային ոճագիտական աշխատություններ առանձնացնելով Ս. Մելքոնյանի, Ս. Էլոյանի ձեռնարկները՝ դրանցում առաջադրված կարևոր հարցերի լուծումներով, ինչն, իրավամբ, ընդունելի է: Այնուհետ համապատասխան ենթազույններում անդրադարձել է բառային ոճագիտության առանցքային հարցերին՝ բառապաշարի ձևախմբաստային խմբերի ու բառապաշարի շերտերի ոճագիտական վերլուծությունների քննությանն ու դարձվածային ոճագիտությանը:

Երրորդ գլխում («*Քերականական ոճագիտական միտքը*») քննվել ու առանձին ենթազույններով («*Ձևաբանական ոճագիտություն*», «*Շարահյուսական ոճագիտություն*») ներկայացվել են քերականական ոճագիտության մտքի զարգացման ընթացքն ու ասպարեզում առկա ուսումնասիրությունները, ձևաբանական ու շարահյուսական ոճագիտական մտքի առանձնահատկությունները:

Ատենախոսը նկատում է, որ 2000-ական թթ.-ից հատուկ ուշադրության նյութ են դարձել տեքստագիտության հարցերը (էջ74): Ասվածին կարող ենք հավելել՝ ոչ միայն տեքստագիտության, այլև *տեքստի ոճագիտության* հարցերը:

Չորրորդ գլխում («Ոճերի տեսակները. դասակարգման սկզբունքները») ուսումնասիրվել են *ոճերի դասակարգման հարցերը՝ զուգահեռ անդրադառնալով ռուս լեզվաբանության մեջ քննարկվող հարցի վերաբերյալ առկա կարծիքներին, ապա առանձին ենթազույգումներով («Գործառական ոճեր», «Իրադրական և անհատական ոճեր»)* ներկայացվել են *գործառական ոճերի, իրադրական ու անհատական ոճերի* ուսումնասիրության հարցերը՝ սկսած Գ. Վահանյանի ոճագիտական ձեռնարկից մինչև մերօրյա՝ խոսքի մշակույթի ուսումնասիրության հարցերին առնչվող ձեռնարկներ: Ատենախոսը, ըստ հեղինակների, առանձին-առանձին ներկայացրել է նաև յուրաքանչյուր ոճի ենթատեսակների անվանումները՝ տերմինները, *ինչպես՝ առօրյա-խոսակցական//խոսակցական; վարչական//վարչագործարարական//պաշտոնական//պաշտոնական-գործարարական* և այլն՝ նշելով լեզվաբաններից յուրաքանչյուրի նախընտրած տերմինաբանությունը:

Հինգերորդ գլխում («Լեզվի պատկերավորման-արտահայտչական համակարգ. ոճագիտական քննության համառոտ պատմություն») ներկայացվել է հարցի ուսումնասիրության պատմությունը, տրվել հիմնական բաժանումը՝ *պատկերավորման և արտահայտչական* միջոցներ տարանջատումը՝ չնշելով ներկայումս ակտիվ շրջանավոր զուգահեռ տերմինները՝ *դարձույթներ ու քանադարձումներ*: Այնուհետև համապատասխան ենթազույգումներում քննվել են պատկերավորման և արտահայտչական միջոցները (*«Պատկերավորման միջոցներ», «Արտահայտչական միջոցներ»*): *«Պատկերավորման միջոցներ»* ենթազույգում ուսումնասիրվել ու ներկայացվել է պատկերավորման միջոցներից չորսի (*մակդիր, համեմատություն, փոխաբերություն, անձնավորում*) հարցի պատմությունը:

Աշխատանքն ամփոփվել է եզրակացություններով, այն ունի օգտագործված գրականության, բառարանների ու հղումների հարուստ ցանկ: Կցված է նաև հավելված:

Ատենախոսությունը շարադրված է նյութի բազմակողմանի իմացությամբ, խոր վերլուծություններով ու գիտական պատշաճ մակարդակով: Հեղինակը, կիրառելով ուսումնասիրության նկարագրական, վերլուծական, համեմատական մեթոդներ, կարողացել է իրագործել առաջադիր նպատակն ու խնդիրները:

Վալտեր Բերբերյանը մանրամասն վերլուծությունների արդյունքում ի մի է բերել ոչ միայն հայերենում, այլև ռուսերենում, անգլերենում առկա քննարկվող լեզվաոճական որոշ իրողություններ՝ տալով հարցի պատմությունն ու նշելով յուրաքանչյուրին բնորոշ դրսևորման առանձնահատկությունը:

Սույն ուսումնասիրությունն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն:

Հաջողված են ատենախոսության այն հատվածները, որոնցում համապատասխան օրինակներով ներկայացվել է քննարկվող իրողությունը, իհարկե, քիչ են՝

հաշվի առնելով աշխատանքի տեսական բնույթը, այնուամենայնիվ աշխատանքն ավելի կշահեր, եթե փաստող օրինակները շատ լինեին, ասենք, օրինակ, *կրկնաբանության* վերաբերյալ (էջ 107):

Գնահատելով Վալտեր Տիգրանի Բերբերյանի իրականացրած ուսումնասիրությունն ու դրա արդյունքը՝ հարկ ենք համարում, այնուամենայնիվ, անդրադառնալ աշխատանքում տեղ գտած *որոշ ոչ հստակ ձևակերպումների, բառագործածության և այլ սխալների ու վրիպակների*: Այսպես՝

1. Ատենախոսության վերնագիրը, մեր կարծիքով, հակասական է. ոճագիտական *մտքի զարգացման հիմնախնդիր*. Թերևս՝ զարգացման *միտում, ընթացք, բայց ոչ հիմնախնդիր*:
2. Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում (2.3.) դարձվածքների ոճական դերի մասին լեզվաբան Ս. Մելքոնյանի կարծիքը հիմնավորելիս ցանկալի կլիներ անդրադառնալ *անհատական ԴՄ-ներին ու ինքնօրինակ բաղադրություններին*, որոնց մանրամասն անդրադարձել է լեզվաբանը, իսկ *վերաբերմունք արտահայտող դարձվածքների համար* այսօր գործածվում է *եղանակավորող դարձվածային միավոր* արտահայտությունը (էջ 53; 55), ինչը Խ. Բաղիկյանն առավել հանգամանալից ներկայացրել է «Դարձվածային ոճաբանություն» աշխատության մեջ:
3. Եզրակացության մեջ (կետ 12) ատենախոսը նշում է, որ «Արդի հայ ոճագիտության մեջ հատուկ ուսումնասիրության առարկա կարող է դառնալ *տեքստի ոճաբանական քննությունը*:» (էջ 113): Վերջին շրջանում լեզվաոճագիտությունն արդեն իր սլաքն ուղղել է տեքստի հարցերի ուսումնասիրմանը. ինչպես հայ, այնպես էլ օտար ուսումնասիրողների համար տեքստի ոճագիտությունը դարձել է քննության պարարտ հող:
4. Կան *բառագործածության ու խնդրատական սխալներ, ոչ հստակ շարադրանքով հատվածներ*: Ինչպես՝ «Թեև վերջին տասնամյակներում ոճագիտության վերաբերյալ լույս են տեսել մի շարք *աշխատանքներ* (>ուսումնասիրություններ), որոնցում հանդիպում ենք ոճագիտության տարբեր *հարցերի հետ>հարցերի* առնչվող հետաքրքիր և արժեքավոր դիտարկումների...» (էջ 3): «Մենք համակարծիք ենք Թ. Շահվեդյանի *եզրահանգումների հետ>եզրահանգումներին*:» (էջ 98): «Լեզվաբանի վերլուծությունը էապես կշահեր այն դեպքում, եթե պատմական ժամանակաշրջանը նկատի ունենալով՝ բնաձայնական բառերի գործածությունը կապեր առհասարակ «Վերք Հայաստանի» վեպում ներկայացվող այդ դրվագի *բովանդակության հետ>բովանդակությանը*:» (էջ 24): «... այլև բացահայտում է հնչյունի՝ *որպես ոճի նշանի* (ոճական անհարթություն) արտահայտչական լայն հնարավորությունները:» (էջ 14): «... առանձնացվում են նաև դարձվածքների, այսպես կոչված, ոճական այլ տեսակներ՝ արհամարհական, օրինակ՝ *շան պես քարշ գալ, գրասենյակի մուկ, գոեհիկ>գոեհկաբանական*, օրինակ՝ *որձատու գազար, էշ ուտել*» (էջ 55):

 - *Վրիպակներ ու սխալներ*՝ «Վերջին կարևոր ուսումնասիրության («Հայոց լեզու և խոսքի մշակույթ») հրատարակումից անցել է շուրջ 5 տարի, *բայցնայնպես* (>*բայց և այնպես*) ոլորտում նոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն կա:» (էջ 12): «...*բայցնայնպես* (>*բայց և այնպես, տե՛ս ատենախոսության գրականության ցանկի №1 և №2 բառարանները*) ոճական առումով համեմատաբար չեզոք է» (էջ 66): Կամ՝ էջ 68 (*վերաշարահյուսական> վերշարահյուսական*), էջ 91 (*վարչա-գործարարական> վարչագործարարական*), էջ 97

(միջով>միջոց), էջ 113(մտիք>միտք), էջ 72 (կատարում> կատարում), էջ 72 (Գրողները>գրողները), էջ 116-118 (գրականության ցանկում №22-23, №48 գրքերի հրատարակչությունները նշված չեն, անմիօրինակ գրությամբ են (№28; №57) կամ չակերտը նշված չէ (№48), էջ 120 (№3 և №6 (Լույս >«Լույս»), էջ 40:


- Ոճագիտական կարևոր ուսումնասիրություն է նաև Ս. Մելքոնյանի «Հ. Շիրազ (Գեղարվեստական վարպետության հարցեր)» («Բարձրագույն դպրոց», Ե., 1993) աշխատությունը, որից ևս հետագայում կարելի է օգտվել:

Ակներև է, որ նկատված թերությունները մասնակի են, բնավ չեն ստվերում կատարված աշխատանքը: Առաջարկում ենք, որ ատենախոսը վերոնշյալն ընդունելու դեպքում հետագայում հետազոտությունը շարունակելիս կամ տպագրության նախապատրաստելիս վերանայի դրանք: Այնուամենայնիվ, բովանդակության կոտ և գրագետ շարադրանքը, հեղինակի ակադեմիական ազնվությունը վկայում են, որ ատենախոսը կատարել է լեզվաբանական լուրջ հետազոտություն:

Վալտեր Տիգրանի Բերբերյանի «Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները (1950-2020-ական թթ.)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և համապատասխանում է Ժ.02.01. դասիչին՝ ներկայացված «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման, ուստի և նրա հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արմենուհի Արտուշի Ավագյան



Ա. Ավագյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Գործարարուղար՝  (Կ.Գ.Թ., դոցենտ Կ. Ռ. Պետրոսյան)